Հաշտության համաձայնություն

ք. Երեւան 19.01.2015թ.

ՀՀ վարչական դատարանի վարույթում գտնվող թիվ ՎԴ/7830/05/13 վարչական գործով (ըստ հայցի “Ինֆորմացիայի ազատության կենտրոն” հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ քաղաքաշինության նախարարության եւ քաղաքաշինության նախարարի՝ տեղեկատվություն ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին) Կողմերը կնքում են հաշտության համաձայնություն (այսուհետ՝ Համաձայնություն) հետեւյալի մասին.

1. “Ինֆորմացիայի ազատության կենտրոն” հասարակական կազմակերպությունն ամբողջությամբ հրաժարվում է իր հայցապահանջից (հայցապահանջներից):

2. ՀՀ քաղաքաշինության նախարարությունը պարտավորվում է Համաձայնության հիմքով թիվ ՎԴ/7830/05/13 վարչական գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի կայացման պահից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ապահովել ՀՀ կառավարության www.e-gov.am կայքի “Մեկ անձից կատարված գնումներ” բաժնում եւ/կամ ՀՀ քաղաքաշինության նախարարության կայքում 2012թ.-ի երկրորդ կիսամյակում ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար մեկ անձից կատարված գնումների թվով 19 (տասնինը) պայմանագրերի (պատճենների) հրապարակումը՝ ներբեռնման հնարավորությամբ:

3. ՀՀ քաղաքաշինության նախարարությունը պարտավորվում է Համաձայնության հիմքով թիվ ՎԴ/7830/05/13 վարչական գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի կայացման պահից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում փոխհատուցել “Ինֆորմացիայի ազատության կենտրոն” հասարակական կազմակերպության կրած դատական ծախսերը 132.541 ՀՀ դրամի չափով:

4. “Ինֆորմացիայի ազատության կենտրոն” հասարակական կազմակերպությունը սույնով հավաստում է, որ դատավարության մասնակիցների նմատմամբ որեւէ պահանջ չունի՝ բացառությամբ սույն Համաձայնության 2-րդ եւ 3-րդ կետերում նախատեսվածների:

5. Կողմերը սույնով հավաստում են, որ գիտակցում են Համաձայնության կնքման բոլոր դատավարական հետեւանքները:

6. Սույն Համաձայնությունը կնքվում է 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին հանձնվում է մեկական օրինակ:

7. Սույն Համաձայնությունը ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրման եւ ՀՀ Վարչական դատարանի կողմից սույն Համաձայնության հիմքով թիվ

ՎԴ/7830/05/13 վարչական գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի կայացման պահից:

Կողմերի ստորագրությունները

“Ինֆորմացիայի ազատության կենտրոն” հասարակական կազմակերպություն	ՀՀ քաղաքաշինության նախարարություն
Ներկայացուցիչ՝ Գեւորգ Հայրապետյան	Ներկայացուցիչ՝ իրավաբանական վարչության պետ Խաչատուր Ղալթախչյան
Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Պուշկինի 3ա: Գործունեության հասցե՝ Հ, ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ	Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 02568394, ՊԳՎ՝ թիվ 211 171 01863, տրված 17.06.2003թ.-ին	
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ Բանկային հաշիվ՝ 1570003452540100	